



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 08/22**

23.05.2022թ.

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲ ընկերությունը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 87-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի, 90-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 87-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի, 90-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին, 59-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

Այսպես, դիմելով Երևան քաղաքի Կենտրեն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ Դիմողը պահանջել է սնանկ ճանաչել «Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն): Դատարանի 29.01.2014 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ:

10.11.2014 թվականին Դիմողը Դատարանին ծանուցել է մորատորիում չատարածելու մասին՝ 3.103.867.029,42 ՀՀ դրամ գումարի չափով ապահովված պահանջի մասով:

14.11.2014 թվականին Դատարանը հաստատել է սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, ապա նշանակել սնանկության գործով կառավարիչ:

Այսինքն՝ զուգահեռաբար ընթացել է երկու գործընթաց, մեկը՝ սնանկ ճանաչելու հետևանքով Ընկերության սնանկության գործընթացը, մյուսը՝ Դիմողի հանդեպ ունեցած պարտքի մարման նպատակով Ընկերությունից հոգուտ Դիմողի գրավադրված գույքի բռնագանձման գործընթացը:

17.02.2017 թվականին Դատարանը որոշում է կայացրել (քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/5306/02/14) Ընկերությունից հոգուտ Դիմողի բռնագանձել Դիմողի և Ընկերության միջև կնքված պայմանագրերից բխող՝ 01.08.2016 թվականի դրությամբ Ընկերության պարտքը՝ 3.836.766.857,20 ՀՀ դրամ գումարը, հաշվեգրվող տոկոսները և տույժերը, բռնագանձումը տարածել գրավի առարկա ք. Երևան, Կենտրոն համայնք, Հյուսիսային պողոտա 2 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա: 22.01.2018 թվականին Դատարանի կողմից տրամադրվել է կատարողական թերթ, որը ներկայացվել է հարկադիր կատարման: Դրանով գրավարդված գույքի բռնագանձման գործընթացը 22.01.2018 թվականին մտել է կատարման փուլ:

Միննույն ժամանակ, 12.08.2015 թվականին սկսվել է Ընկերության լուծարման գործընթացը և կասեցվել է վերջինիս գործունեությունը: 25.12.2015 թվականին Ընկերության սնանկության գործով կառավարիչը Դատարան է ներկայացրել իր կողմից կազմված վերջնական հաշվետվությունը և միջնորդել ավարտել սնանկության գործը: 15.10.2018 թվականի վճռով Ընկերության սնանկության գործն ավարտվել է:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.03.2019 թվականի որոշմամբ Դիմողի բողոքը բավարարվել է մասնակիորեն, որոշվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/0090/04/13 գործով 15.10.2018 թվականի վճիռը բեկանել և գործըն ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ սնանկության վարույթն ավարտելու հարցի մասով ամբողջ ծավալով նոր քննության:

Գործով ներկայացվել է վճռաբեկ բողոք: Վճռաբեկ դատարանի՝ 13.07.2021 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 14.03.2019 թվականի որոշումը բեկանվել է և օրինական ուժ է տրվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 15.10.2018 թվականի վճիռին:

22.07.2021 թվականին Ընկերության սնանկության գործով կառավարչի դիմումի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից կատարվել է Ընկերության լուծարման մասին պետական գրանցում:

28.10.2021 թվականին Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևանի Կենտրոն, Նորք-Մարաշ և Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների հակադիր կատարողը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պարտապան Ընկերությունը լուծարվել է, որոշում է կայացրել դադարեցնել Ընկերությանը պատկանող գույքի

նկատմամբ հետախուզումը, վերացվել են Ընկերությանը պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքները, իսկ կատարողական վարույթը կարճվել է:

Ըստ Դիմողի՝ գրավով ապահովված պարտատերերի իրավունքները և իրավաչափ ակնկալիքներն անտեսվում են սնանկության գործերով կառավարչի և դատարանի կողմից: Այդ պարտատերերը դուրս են հանվում պարտատերերի վերջնական ցանկից, թույլատրվում է պարտապանի՝ անգամ գրավով ապահովված պարտավորությունների դադարում՝ անկախ օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատական ակտերի առկայությունից, որոնցով երաշխավորվում է գրավի առարկայի բռնագանձումը հոգուտ գրավով ապահովված պարտատերերի:

Ուստի, վիճարկվող կարգավորումները չեն ապահովում արդարացի հավասարակշռություն տնտեսական գործունեության մասնակիցների շահերի միջև:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթները համատեղելի չեն իրավական պետության հիմնարար սահմանադրական սկզբունքի հետ և հակասում են նաև Սահմանադրության 1-ին հոդվածին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ մասի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 87-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի, 90-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին, 59-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին:

Վիճարկվող դրույթների բովանդակությունը (ԱԺ, 23.06.2011թ., ՀՕ-235-Ն օրենքի խմբագրությամբ) հետևյալն է.

Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

3. Ապահովված պահանջների բավարարման առանձնահատկությունները, ինչպես նաև ապահովված պահանջների բավարարման համար պարտապանի գույքի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման առանձնահատկությունները կարգավորվում են սույն օրենքի 39-րդ և 43-րդ հոդվածներով:

Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Մոռատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատերեր չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման (այդ թվում՝ գործող օրենսդրությամբ սահմանված՝ առանց դատարան դիմելու) հաշվին: Այդ դեպքում պարտատերեր, անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ:

Օրենքի 87-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց ոչ ուշ, քան 15 օր հետո կառավարիչը դատարան է ներկայացնում վերջնական հաշվետվությունը:

2. Դատարան ներկայացվող վերջնական հաշվետվությանը կցվում են՝

ա) պարտապանի գույքի վաճառքը հավաստող փաստաթղթերը.

բ) պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները.

գ) պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը:

Կառավարչի վերջնական հաշվետվությունը պետք է պարունակի ամփոփ տեղեկատվություն՝ պարտապանի ակտիվների հավաքման վերաբերյալ, և հիմնավորված միջնորդություն՝ սնանկության գործն ավարտելու վերաբերյալ:

5. Դատավորը, քննելով վերջնական հաշվետվությունը, վճիռ է կայացնում պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին, կամ մերժում է գործն ավարտելու միջնորդությունը՝ նշելով մերժման պատճառները:

Օրենքի 90-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝

1. Իրավաբանական անձ պարտապանը համարվում է լուծարված, իսկ պարտապան անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը՝ դադարած սույն օրենքի 88-րդ հոդվածով նախատեսված պետական գրանցման պահից:

4. Պարտապանը չի կարող ազատ ճանաչվել՝

ա) ալիմենտների վճարումից.

բ) սնանկ ճանաչելու պահին նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային մարմիններից թաքցրած պարտավորությունների վճարումներից.

զ) կյանքի և առողջությանը պատճառված վնասներից առաջացող պարտավորություններից.

դ) հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պարտավորություններից:

Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝

Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Այսպես, շուկայական տնտեսության պայմաններում առաջանում են այնպիսի իրավիճակներ, երբ բացակայում է շուկայի մասնակիցների՝ իրենց կողմից ստանձնած պարտավորությունները կատարելու հնարավորությունը: Ուստի, անհրաժեշտ է որոշակի իրավական գործիքների և կանոնակարգումների միջոցով պաշտպանել ինչպես պարտատերերի, այնպես էլ պարտապանների շահերը: Եթե քաղաքացիական հայց ներկայացնելու միջոցով իրավունքների պաշտպանությունը հիմնականում անհատական շահերի պաշտպանության միջոց է, ապա սնանկության պարագայում նպատակը կոլեկտիվ շահերի պաշտպանությունն է, որը ներառում է ինչպես պարտատերերին, այնպես էլ պարտապանին, չնայած, որ, որպես կանոն, սնանկության վարույթները սկսվում են առանձին անձանց դիմումների հիման վրա: Այսպիսի իրավիճակները կարգավորվում են սնանկության միջոցով: Սնանկությունը հետապնդում է մի քանի նպատակ.

1. ապահովել պարտատերերի՝ պարտապանին ուղղված պահանջների կատարումը,

2. նպաստել ֆինանսական ծանր կացության մեջ գտնվող կազմակերպություններին պարտավորությունների կատարման՝ ֆինանսական առողջացման ծրագրի իրագործման միջոցով դուրս գալ սնանկացման գործընթացից և վերսկսել բնականոն գործունեությունը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ կարճվում է սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով այն քաղաքացիական գործի վարույթը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ՝ պարտապանի մասով: Այսինքն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ

մտնելու պահից սառեցվում է պարտատերերի պահանջների բավարարումը (մորատորիում): Այդ պահից սառեցվում են պարտատերերի բոլոր գործողությունները, որոնք ուղղված են պարտապանի նկատմամբ պահանջների բավարարմանը:

Սակայն, Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետի հիմքով կարճման ենթակա են սնանկ ճանաչված պարտապանի մասնակցությամբ ոչ բոլոր քաղաքացիական գործերի վարույթները, այլ միայն այն քաղաքացիաիրավական վեճերով գործերի վարույթները, որոնցում սնանկ ճանաչված պարտապանին ներկայացված է նյութաիրավական պահանջ՝ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու տեսքով, և որոնց լուծումը կարող է հանգեցնել վերջինիս գույքային զանգվածի փոփոխության:

Սույն գործով անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական խնդիրը. ի՞նչ հետևանքներ կարող է առաջացնել պարտապանի սնանկությունը՝ գրավով ապահովված պարտատիրոջ համար, և ի՞նչ կարգով պարտատերը կարող է ստանալ իր ապահովված պահանջների բավարարում:

Օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի համաձայն՝ մորատորիումի գործողությունը չի տարածվում գրավով ապահովված պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու կամ նրանց՝ գրավով ապահովված պահանջների բավարարման համար ցանկացած գործարքի կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա, եթե ապահովված պարտատերը մորատորիում չտարածելու մասին ծանուցել է դատարանին:

Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատերը չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման (այդ թվում՝ գործող օրենսդրությամբ սահմանված՝ առանց դատարան դիմելու) հաշվին:

Այդ դեպքում պարտատերերն անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չեն կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ:

Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մորատորիում չտարածելու մասին դատարանին չծանուցած գրավով ապահովված պարտատերն ընդգրկվում է սնանկության գործով պարտատերերի ցանկում և իր ապահովված պահանջների

բավարարումն ստանում է նույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ մասերով սահմանված կարգով:

Օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պարտատերերի ցանկում ընդգրկված գրավով ապահովված պարտատերը կարող է պահանջել իր՝ գրավով ապահովված պարտավորությունը առաջնահերթ կերպով բավարարել գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից:

Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պարտատերերի ցանկում ընդգրկված գրավով ապահովված պարտատերը չի կարող մասնակցել պարտապանին պատկանող իր համապատասխան պարտավորության համար չգրավադրված գույքի իրացումից ստացված միջոցների բաշխմանը մինչև գրավադրված գույքի իրացումը, քանի դեռ գրավադրված գույքի արժեքն ավելի կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջին, բացառությամբ դատարանի որոշմամբ համարժեք պաշտպանության տրամադրման դեպքերի: Եթե գրավադրված գույքի արժեքը (մեկնարկային գինը) հրապարակային սակարկություններով իրացման ընթացքում կամ գույքի կորստի (ոչնչացման, հափշտակման) կամ վնասման արդյունքում նվազում է ապահովված պահանջի չափից, ապա ապահովված պարտատերը ձեռք է բերում քվեարկության ձայնի իրավունք՝ այդ նվազման չափով:

Օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե համապատասխան գրավի առարկայի իրացումից ստացված միջոցները բավարար չեն պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջներն ամբողջովին մարելու համար, ինչպես նաև երաշխիքով (երաշխավորությամբ) ապահովված պահանջների չբավարարված (այդ թվում՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձից պարտավորության կատարում չպահանջելու հետևանքով չբավարարված) մասը (բացառությամբ այդ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պարտապանի սնանկության գործընթացում հաշվարկված՝ պայմանագրով սահմանված տուժանքների, տուգանքների և վճարման ենթակա տոկոսների գումարների) համարվում է չապահովված պահանջ, իսկ պարտատերը՝ չապահովված պարտատեր՝ չապահովված պահանջի չափով:

Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե գրավի առարկայի շուկայական արժեքը հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջի գումարին կամ ցածր է դրանից, ապա պարտատերերի ցանկում ընդգրկված պարտատերն իրավունք ունի իր

պահանջի կամ դրա մասի չափով դատարանի որոշմամբ որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին ստանալու գրավի առարկան՝ փոխհատուցելով այդ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը՝ գրավի առարկայի արժեքի 5 տոկոսի չափով: Այդ դեպքում տվյալ պարտատիրոջ պահանջի չափը չի նվազեցվում գույքի պահպանման և փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված գումարի չափով:

Գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության կատարման համար գրավադրված գույքը չի ընդգրկվում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը կարող է այդ գույքից իր պահանջների բավարարում ստանալ սնանկության վարույթից դուրս ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, սակայն միայն այն դեպքում, երբ տեղեկանալով պարտապանի սնանկ ճանաչվելու վերաբերյալ՝ ապահովված պարտատերը ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին: Այսինքն՝ օրենսդիրը, պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում հնարավորություն ընձեռնելով ապահովված պարտատիրոջը ստանալու իր պահանջների բավարարումը գրավադրված գույքի հաշվին՝ շրջանցելով սնանկության գործով վարույթը, միաժամանակ սահմանել է այն պարտադիր պայմանը, որի պահպանման դեպքում միայն Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնը կարող է գործել: Նշված պայմանի չպահպանման դեպքում՝ գրավադրված գույքը ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում և ապահովված պարտատերը դրանից բավարարում կարող է ստանալ բացառապես սնանկության վարույթի շրջանակներում՝ ընդգրկվելով պարտատերերի ցանկում:

Վերոգրյալի վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ համար նախատեսել է իր բավարարումը ստանալու երկու այլընտրանքային եղանակ՝ սնանկության վարույթից դուրս և սնանկության վարույթի շրջանակներում՝ նշված երկու եղանակներից որևէ մեկի ընտրության հնարավորությունը թողնելով պարտատիրոջ հայեցողությանը:

Թե՛ սնանկության վարույթից դուրս, թե՛ սնանկության վարույթի շրջանակներում բավարարում ստանալու եղանակներն ունեն իրենց առանձնահատկությունները:

Այսպես, եթե գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության գործով վարույթը շրջանցելու միջոցով իր պահանջները բավարարելու եղանակը, ապա վերջինս բավարարում կարող է ստանալ բացառապես գրավադրված գույքի հաշվին, և անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ: Մինչդեռ այն դեպքում, երբ գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության վարույթի շրջանակներում իր պահանջների բավարարում ստանալու եղանակը, ապա գրավադրված գույքը ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում, և այս դեպքում գրավով ապահովված պարտավորության պարտատերն իր պահանջների բավարարումը կարող է ստանալ Օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ մասերով սահմանված կարգով:

Օրենսդրի կողմից նման տարբերակված կարգավորում սահմանելու նպատակն է սնանկության վարույթի առկայության պայմաններում երաշխավորել գրավով ապահովված պարտատերերի և մյուս պարտատերերի իրավունքների և օրինական շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը:

Այդ իսկ նկատառումով օրենսդիրը, գրավով ապահովված պարտատիրոջը հնարավորություն ընձեռելով կամովին ընտրելու իր պահանջների բավարարման եղանակը՝ շրջանցելով սնանկության վարույթը, կամ այդպիսի բավարարում ստանալ սնանկության վարույթի շրջանակներում, այդուհանդերձ, նախատեսել է որոշակի սահմանափակումներ:

Այսպես, սնանկության վարույթի շրջանակներից դուրս իր պահանջների բավարարում ստանալու՝ գրավով ապահովված պարտատիրոջ՝ գրավով ապահովված պահանջների բավարարման իրավունքն օրենսդիրը սահմանափակել է գրավի արժեքի սահմաններով, ի տարբերություն քաղաքացիական շրջանառության բնականոն պայմանների, երբ գրավով ապահովված պարտատերն իրավունք ունի գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարն իր պահանջները բավարարելու համար բավարար չլինելու պայմաններում պակաս գումարն ստանալ պարտապանի այլ գույքից (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ մաս): Միաժամանակ, սնանկության վարույթի շրջանակներում գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջն իրավունք վերապահելով պահանջել իր՝ գրավով ապահովված պարտավորությունն առաջնահերթ բավարարել գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից,

պահանջի բավարարումը գրավից ազատ գույքից օրենսդիրը սահմանափակել է այնքան, քանի դեռ գրավադրված գույքի արժեքն ավելի կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջին: Ընդ որում, գրավից ազատ գույքի հաշվին գրավով ապահովված պահանջատիրոջ պահանջները կարող են բավարարվել միայն որպես չապահովված պահանջ՝ գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից չբավարարված պահանջի մասով՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով և պայմաններով:

Օրենսդիրը, պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում հնարավորություն ընձեռնելով գրավով ապահովված պահանջի պարտատիրոջը ստանալու իր պահանջների բավարարում՝ շրջանցելով սնանկության գործով վարույթը, և այդ բավարարման չափը սահմանափակելով բացառապես գրավադրված գույքի արժեքով, որն է կերպ չի սահմանափակել գրավով ապահովված պարտատիրոջ՝ գրավով ապահովված իր պահանջների բավարարման իրավունքի իրացման՝ օրենսդրությամբ սահմանված եղանակների ընտրության հնարավորությունը: Մասնավորապես, սահմանափակված չէ գրավադրված գույքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ դատական կամ արտադատական կարգով իրացնելու հնարավորությունը: Ավելին, Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը, սահմանելով, որ գրավով ապահովված պահանջները սնանկության վարույթից դուրս բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված գույքի իրացման հաշվին, մասնավորեցնելով նշել է՝ «այդ թվում՝ գործող օրենսդրությամբ սահմանված՝ առանց դատարան դիմելու» հաշվին, ինչը նշանակում է, որ դատական կարգով գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու հնարավորությունն ինքնին ենթադրվում է:

Այն դեպքում, երբ գրավով ապահովված պահանջի պարտատերն օգտվում է իր պահանջի բավարարումը սնանկության վարույթի շրջանակներից դուրս ստանալու՝ օրենքով իրեն վերապահված իրավունքից, վերջինս հնարավորություն ունի գրավադրված գույքի վրա բռնագանձում տարածել և իրացնել այն ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված՝ գրավադրված գույքի իրացման կանոններին համապատասխան:

Օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով սահմանված՝ մորատորիումի գործողության տարածման բացառությունը հնարավորություն է տալիս գրավով ապահովված պարտատիրոջը մորատորիում չտարածելու մասին դատարանին

ծանուցելու դեպքում սնանկության վարույթը շրջանցելով գրավով ապահովված պահանջների համար դրամական կամ այլ բավարարում ստանալ, կամ գրավով ապահովված պահանջների բավարարման համար կնքել ցանկացած գործարք կամ իրականացնել այդպիսի գործարքի կատարմանն ուղղված ցանկացած գործողություն կամ գործընթաց: Հետևաբար, եթե տեղեկանալով պարտապանի սնանկ ճանաչվելու մասին՝ գրավով ապահովված պահանջի պարտատերն ապահովել է սնանկության վարույթը շրջանցելով իր պահանջների բավարարում ստանալու համար օրենքով նախատեսված պարտադիր պայմանի կատարումը, այն է՝ ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին, ապա վերջինիս՝ գրավադրված գույքի արժեքի սահմաններում պահանջների դրամական կամ այլ բավարարում ստանալու իրավունքի իրացման՝ պարտատիրոջ կողմից ընտրված եղանակի վրա այլևս մորատորիումի գործողությունը չի կարող տարածվել, այդ թվում՝ չեն կարող գործել Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» և «գ» կետերով նախատեսված սահմանափակումները, այն է՝ չի կարող գործել պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով որևէ քաղաքացիական կամ վարչական գործի վարույթ սկսելու արգելքը, ինչպես նաև չի կարող կարճվել գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական գործի վարույթը, որը վերաբերում է գրավադրված գույքի հաշվին գրավով ապահովված պարտատիրոջ պահանջի բավարարմանը (Տե՛ս թիվ ԵԿԴ/1873/02/14 քաղաքացիական գործող ՀՀ Վճռաբեկ դատարանի 28.12.2015թ. որոշումը): Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ նույն տրամաբանությամբ, կարճման ենթակա չէ նաև ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված՝ գրավադրված գույքի հաշվին գրավով ապահովված պարտատիրոջ պահանջի բավարարմանն ուղղված՝ պարտապանի գույքի բռնագանձման վերաբերյալ կատարողական վարույթը:

Ընդ որում, վերը նշված կարգավորումները հավասարապես կիրառելի են նաև այն դեպքերում, երբ սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունների ապահովման համար գրավադրվել է երրորդ անձին պատկանող գույք: Նման եզրահանգումը բխում է Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասից, համաձայն որի՝ պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ: Ի ապահովումն պարտապանի՝ նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մորատորիում չտարածելու մասին

դատարանին ծանուցած գրավով ապահովված պարտատիրոջ առջև ստանձնած պարտավորության համար գրավադրված գույքը (այդ թվում՝ երրորդ անձին պատկանող) չի ընդգրկվում պարտապանի գույքի կազմում, բացառությամբ դրա իրացումից ստացված միջոցների, որոնք պարտապանի գույքի կազմում են ընդգրկվում նույն օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում:

Սույն գործով վիճարկվող դրույթների ուսումնասիրությունից հանգում ենք այն եզրակացության, որ խնդիրը՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված կատարողական վարույթի մասով, ըստ էության, առնչվում է օրենսդրական բացին, ուստի, քննարկման առարկա պետք է դարձնել օրենսդրական բացի սահմանադրականության գնահատման հարցը:

Սահմանադրական դատարանն օրենսդրական բացի սահմանադրականության հարցին անդրադարձել է իր մի շարք, մասնավորապես՝ ՄԴՌ-864, ՄԴՌ-914, ՄԴՌ-917, ՄԴՌ-922, ՄԴՌ-933, ՄԴՌ-1020, ՄԴՌ-1056, ՄԴՌ-1143, ՄԴՌ-1154, ՄԴՌ-1255 որոշումներում:

Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանն իր ՄԴՌ-864 որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «... Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր ՄԴՌ-914 որոշման մեջ արձանագրել է. «7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման

իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը:

... Զարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

Թիվ ՍԴՈ-1255 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է «ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում, մասնավորապես, 2014 թվականի ապրիլի 8-ի ՍԴՈ-1143 որոշմամբ միմյանցից հստակ սահմանազատել է օրենսդրական կարգավորումների ոչ լիարժեք լինելու այն դեպքերը, որոնք կարող են քննվել սահմանադրական դատարանի կողմից, այն դեպքերից, որոնց լուծումը վերապահված է բացառապես օրենսդիր մարմնին:

Նշված որոշման 6-րդ կետում ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է սկզբունքային նշանակություն ունեցող հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) «...Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»,

բ) «... բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է»:

Սույն դեպքում առկա է օրենսդրական բաց այն առումով, որ հստակ կարգավորում չկա, թե՛ եթե գրավով ապահովված պարտատերը մորատորիում չտարածելու մասին դատարանին ծանուցելու դեպքում սնանկության վարույթը շրջանցում է գրավով

ապահովված պահանջների համար դրամական կամ այլ բավարարում ստանալու, կամ գրավով ապահովված պահանջների բավարարման համար ցանկացած գործարք կնքելու կամ այդպիսի գործարքի կատարմանն ուղղված ցանկացած գործողություն կամ գործընթաց իրականացնելու միջոցով, ապա պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց և պարտապանի լուծարվելուց հետո գրավով ապահովված պահանջների կատարմանն ուղղված գրավադրված գույքի բռնագանձմանն վերաբերյալ կատարողական վարույթի հետագա ընթացքն ինչ է լինելու, քանի որ մի կողմից՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե պարտապանը դատարանի վճռով ճանաչվել է սնանկ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի կամ սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին դատարանի վճիռը մտել է օրինական ուժի մեջ, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե պարտապան-իրավաբանական անձը լուծարվել է, մյուս կողմից՝ եթե գրավով ապահովված պահանջի պարտատերն ապահովվել է սնանկության վարույթը շրջանցելով իր պահանջների բավարարում ստանալու համար օրենքով նախատեսված պարտադիր պայմանի կատարումը, այն է՝ ծանուցել է դատարանին մորատորիում չտարածելու մասին, ապա վերջինիս՝ գրավադրված գույքի արժեքի սահմաններում պահանջների դրամական կամ այլ բավարարում ստանալու իրավունքի իրացման՝ պարտատիրոջ կողմից ընտրված եղանակի վրա այլևս մորատորիումի գործողությունը չի կարող տարածվել, այդ թվում՝ չեն կարող գործել Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» և «գ» կետերով նախատեսված սահմանափակումները, այն է՝ չի կարող գործել պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով որևէ քաղաքացիական կամ վարչական գործի վարույթ սկսելու արգելքը, ինչպես նաև չի կարող կարճվել գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական գործի վարույթը, որը վերաբերում է գրավադրված գույքի հաշվին գրավով ապահովված պարտատիրոջ պահանջի բավարարմանը: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ նույն տրամաբանությամբ, կարճման ենթակա չէ նաև ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված՝ գրավադրված գույքի հաշվին գրավով ապահովված պարտատիրոջ պահանջի բավարարմանն ուղղված՝ պարտապանի գույքի բռնագանձման վերաբերյալ

կատարողական վարույթը: Այս մասով առկա է օրենսդրական բաց, որը պետք է հաղթահարվի Ազգային ժողովի կողմից համապատասխան օրենսդրական փոփոխությունների միջոցով: Իսկ մինչ այդ խնդիրը լիովին կարող է կարգավորվել վերը նշված վերլուծության հիման վրա (այսինքն՝ տվյալ դեպքում կատարողական վարույթը չպետք է կարճվի):

Ինչ վերաբերում է Դիմողի այն տեսակետին, թե գրավադրված գույքի իրացումից հետո, եթե գրավով ապահովված պարտավորությունն ամբողջությամբ չի մարվել, ապա տվյալ պարտատերը պետք է բավարարում ստանա պարտատիրոջ այլ գույքի իրացումից ստացված միջոցների հաշվին, ապա ինչպես արդեն իսկ վերևում նշեցինք, օրենսդիրը պարտապանի նկատմամբ սնանկության վարույթի առկայության պայմաններում գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջ համար նախատեսել է իր բավարարումը ստանալու երկու այլընտրանքային եղանակ՝ սնանկության վարույթից դուրս և սնանկության վարույթի շրջանակներում՝ նշված երկու եղանակներից որևէ մեկի ընտրության հնարավորությունը թողնելով պարտատիրոջ հայեցողությանը: Ընդ որում, եթե գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության գործով վարույթը շրջանցելու միջոցով իր պահանջները բավարարելու եղանակը, ապա վերջինս բավարարում կարող է ստանալ բացառապես գրավադրված գույքի հաշվին (որն ի դեպ չի ներառվում պարտապանի գույքի կազմում և սնանկության վարույթի շրջանակներում չի իրացվում, ուստի տվյալ գույքի իրացումից մյուս պարտատերերը բավարարում չեն ստանում), և անկախ ապահովված պահանջների բավարարման չափից, տվյալ պարտավորության մասով հետագայում չի կարող որևէ պահանջ ներկայացնել պարտապանի այլ գույքի նկատմամբ: Մինչդեռ այն դեպքում, երբ գրավով ապահովված պարտավորության պարտատերն ընտրում է սնանկության վարույթի շրջանակներում իր պահանջների բավարարում ստանալու եղանակը, ապա գրավադրված գույքը ներառվում է սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում, և այս դեպքում գրավով ապահովված պարտավորության պարտատերն իր պահանջների բավարարումը կարող է ստանալ Օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ մասերով սահմանված կարգով:

Նման տարբերակված կարգավորումը նպատակաուղղված է երաշխավորելու գրավով ապահովված պարտատերերի և մյուս պարտատերերի իրավունքների և օրինական շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը: Հակառակ դեպքում,

կստացվեր, որ գրավով ապահովված պարտավորության պարտատերը, նախ, շրջանցելով սնանկության վարույթը, արտադատական կամ դատական կարգով կստանար գրավադրված գույքից բավարարում, այնուհետև սնանկության վարույթի շրջանակներում այլ պարտատերերի հետ կընդգրկվեր պարտատերերի ցուցակ և բավարարում կստանար պարտապանի այլ միջոցների հաշվին՝ այդ կերպ հայտնվելով առավել նպաստավոր պայմաններում, քան մյուս պարտատերերը (իսկ սա իր հերթին կհանգեցներ խտրականության արգելքի սկզբունքի խաթարման՝ մյուս պարտատերերի տեսանկյունից):

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 87-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերի, 90-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց չէ:

Համակարգող՝

 Recoverable Signature

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169